COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

CALL FOR PROPOSALS

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների դրամաշնորհներ
8900-2023-01

Ծրագիր	«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2»
Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն	**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ** Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ
Ֆինանսավորում	Ավստրիական զարգացման համագործակցություն՝ Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագրի շրջանակներում
Տևողությունը	Ծրագրերը պետք է իրականացվեն մինչև 2024թ. -ի հուլիսի 31-ը: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն մինչև 2024թ. -ի օգոստոսի 31-ը:
Մոտավոր մեկնարկի ամսաթիվը	01-ը փետրվարի, 2024թ.
Հայտարարման ամսաթիվը	06-ը դեկտեմբերի, 2023թ.
Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետը	05-ը հունվարի, 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

II. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 4

III. ԲՅՈՒՋԵ 5

IV. ՊԱՀԱՆՋՆԵՐ 5

1. Ընդհանուր նպատակ 5
2. Գործողության միջոցներ 5
3. Իրականացման ժամանակահատվածը 6
4. Թիրախային շահառուներ 6
5. Բյուջետային պահանջներ 6
6. Հետևելով ընդհանուր նպատակին, նախապատվությունը կտրվի հետևյալին՝ 7
7. Գործողության հետևյալ տեսակները չեն դիտարկվի. 7
8. Ֆինանսավորման պայմանները 7
9. Հաշվետվությունների ներկայացման պահանջները. 7

V. ԻՆՉՊԵՆ ԴԻՄԵԼ 8

1. Ներկայացվող փաստաթղթերը. 8
2. Հարցեր 9
3. Ներկայացման վերջնաժամկետ 9
4. Դիմում-հայտի փոփոխություն 9

VI. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 9

1. Բացառման չափանիշներ. 10
2. Իրավասության չափանիշներ. 11
3. Դիմում-հայտերի գնահատման չափանիշներ. 11

VII. ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ 11

VIII. ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 12

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.

- Հավելված I - Դիմում-հայտ
- Հավելված II - Բյուջե (ձևանմուշը)
- Հավելված III - Աշխատանքային պլան (ձևանմուշը)
- Հավելված IV - Դրամաշնորհային պայմանագրի ձևանմուշը (միայն տեղեկատվության համար)

ԻՆՉՊԵՆ ԴԻՄԵԼ

- Լրացրե՛ք և ստորագրե՛ք **Դիմում-հայտի ձևը** (տե՛ս **Հավելված I**):
- Կցե՛ք **Բյուջեն** (օգտագործելով **Հավելված II**-ում վերարտադրված ձևանմուշը):
- Կցե՛ք **Աշխատանքային պլանը** (օգտագործելով **Հավելված III**-ում վերարտադրված ձևանմուշը):
- Ուղարկե՛ք այս փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով (Word և/կամ PDF) հետևյալ էլ. հասցեին՝ tender.armenia-bh8900@coe.int**:** Էլ. նամակները պետք է ունենան հետևյալ վերնագիրը. **Դրամաշնորհի դիմում-հայտ. Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:**
- Դիմում-հայտերը պետք է ուղարկվեն **մինչև 2024թ. -ի հունվարի 5-ը (Հայաստանի ժամանակով՝ մինչև ժ. 24:00-ը):**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դիմում-հայտերի ներկայացման այս հրավերը մեկնարկում է Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում: Դրա նպատակն է համաֆինանսավորել **միջհամայնքային (ՄՀՀ) կամ անդրսահմանային համագործակցության (ԱՍՀՀ) տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացումը**:

Այս դրամաշնորհային մրցույթը բաց է **Հայաստանի բոլոր 64 խոշորացված համայնքների** համար: Ընտրված համայնքները դրամաշնորհներ կստանան այն ծրագրերի համար, որոնք ուղղված են միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության շրջանակներում համատեղ ծառայությունների մատուցման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացմանը: Միջհամայնքային համագործակցությունը կներառի համագործակցություն հարևան խոշորացված համայնքների միջև Հայաստանի ամբողջ տարածքում: Անդրսահմանային համագործակցությունը կընդգրկի Հայաստանի Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի և Վրաստանի Սամցխե-Ջավախեթիայի և Քվեմո-Քարթլիի շրջանների հարևան համայնքները:

Դիմում-հայտերի ներկայացման հրավերը՝ ներառյալ դիմումի ձևը, բյուջեի ձևը, աշխատանքային պլանի ձևը և դրամաշնորհի պայմանագրի ձևանմուշը, կուղարկվեն Հայաստանի բոլոր 64 խոշորացված համայնքների պաշտոնական էլ. հասցեներին: Այն կհրապարակվի նաև Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կայքում:

Ծրագրերի դիմում-հայտերը պետք է ուղղված լինեն այս ոլորտում Եվրոպայի խորհրդի ջանքերին հավելյալ արժեք ստեղծելուն:

II. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագիրը նպատակ ունի աջակցելու եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման վերանայված օրենսդրության ընդունմանը, որը կարտացոլի Հայաստանի նոր տարածքային-վարչական քարտեզը, ինչպես նաև զարգացնելու նոր խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները՝ ապահովելով նրանց կողմից նոր պարտականությունների և իրավասությունների ստանձնումը: Այն նաև միտված է լավ կառավարման սկզբունքների մասին իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև անդրսահմանային համագործակցության (այսուհետ՝ ԱՍՀՀ), միջհամայնքային համագործակցության (այսուհետ՝ ՄՀՀ) և տեղական մակարդակում տնտեսական զարգացման խթանմանը:

Մասնավորապես, ծրագրի ավարտին ՀՀ համայնքները կշահեն բարելավված կառավարումից, իսկ Հայաստանի քաղաքացիները կշահեն ավելի ներառական, արդյունավետ, արդյունավոր և դիմացկուն ինստիտուցիոնալ կառույցներից, հանրային ծառայությունների մատուցման բարելավումից այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են թափոնների կառավարումը, մշակույթը, զբոսաշրջություն կամ հասարակական տրանսպորտը, ինչպես նաև տեղական մակարդակում տնտեսական զարգացման ընդլայնված հնարավորություններից:

Ծրագրի հիմնական գործընկերը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է:

III. ԲՅՈՒՋԵ

Դրամաշնորհային մրցույթի ցուցիչ հասանելի բյուջեն կազմում է **80,000 (ութսուն հազար) եվրո:** Եվրոպայի խորհուրդը մտադիր է տրամադրել մինչև **10 դրամաշնորհ՝** յուրաքանչյուրը՝ առավելագույնը **8,000 (ութ հազար) եվրոյի** չափով:

Ելնելով ֆինանսական միջոցների առկայությունից և Ծրագրի սկզբնական ժամկետի երկարաձգումից, Եվրոպայի խորհուրդն իրավունք է վերապահում չտրամադրել առկա բոլոր միջոցները և/կամ վերաբաշխել առկա միջոցները այլ կերպ՝ կախված ստացված ծրագրերի առաջարկներից և մրցույթի արդյունքներից:

IV. ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Ընդհանուր նպատակ

Դրամաշնորհները կֆինանսավորեն այն ծրագրերը, որոնք միտված են **միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության ոլորտում տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների մշակմանը**:

Այն ծրագրերի առաջարկները, որոնք արդյունավետ և հստակ ձևով կհամապատասխանեն դրամաշնորհի չափանիշներին, կստանան դրամաշնորհ հետևյալ անվանակարգերում.

- Միջհամայնքային համագործակցության կոնկրետ ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ աջակցելու համատեղ ծառայությունների մատուցման միջհամայնքային ծրագրերի իրականացմանը:
- Անդրսահմանային համագործակցության կոնկրետ ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ աջակցելու, օրինակ, տնտեսական զարգացման կամ համօգտագործվող համայնքային ծառայությունների/ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացմանը:

2. Գործողության միջոցներ

Տեխնիկատնտեսական ուսումնասիրության դրամաշնորհների տեսակները ներառում են՝

- Միջհամայնքային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ
- Անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ

Ակնկալվում է, որ ֆինանսավորվող ցանկացած ծրագրի հիմքում ընկած կլինի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը՝ այն փաստացի տվյալները, որոնց օգնությամբ կապացուցեք, որ այն, ինչ առաջարկվում է ՄՀՀ կամ ԱՍՀՀ շրջանակներում, իրագործելի է՝ փաստաթղթավորված կարիքների կամ ժողովրդագրական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ապացույցների այլ ձևերի հիման վրա:

3. Իրականացման ժամանակահատվածը

Ծրագրերի իրականացման ժամանակահատվածն սկսվում է **2024թ. -ի փետրվարի 1-ից** (տե՛ս ներքևում նշված VIII բաժինը) և ավարտվում է ոչ ուշ, քան **2024թ. -ի հուլիսի 31-ը:**

Հաշվետվությունները պետք է ներկայացվեն **ոչ ուշ քան 2024թ. -ի օգոստոսի 31-ը:**

Դիմում-հայտը ներկայացնելու ամսաթվից առաջ ավարտված ծրագրերն ավտոմատ կերպով կբացառվեն: Մինչև հայտերի ներկայացման ամսաթիվը կամ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման ամսաթվից առաջ սկսված ծրագրերի համար կարող են փոխհատուցվել միայն այն ծախսերը, որոնք կատարվել են դրամաշնորհի դիմում-հայտը ներկայացնելու օրվանից հետո (պայմանով, որ դա նախատեսված է համապատասխան պայմանագրով):

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Դիմորդներին կտրամադրվի փորձագիտական ուղղորդում և աջակցություն:

4. Թիրախային շահառուներ

Ծրագրերը պետք է ուղղված լինեն մասնավորապես հետևյալ հիմնական շահառուներին.

- Խոշորացված համայնքների ՏԻՄ-ը,
- Համայնքապետարանների աշխատակազմը,
- Կանայք, երիտասարդներ, անապահով / աղքատության մեջ ապրող մարդիկ,
- Համայնքի բնակիչները, ընդհանրապես:

Վերը նշված ցանկը անբողջական չէ, և ծրագրերի առաջարկները կարող են ներառել այլ շահառու խմբեր, պայմանով, որ վերջիններս համապատասխանում են Ծրագրի ընդհանուր նպատակին:

5. Բյուջետային պահանջներ

Ծրագրային առաջարկներին կից պետք է ներկայացվի բյուջեի նախագիծ (տե՛ս **Հավելված II - Բյուջեի ձևանմուշը**), **ՀՀ դրամով՝** առավելագույնը **8,000 (ութ հազար) եվրոյին համարժեք:** Բյուջեի նախագիծը պետք է համապատասխանի առաջարկվող գործողություններին և լինի ճշգրիտ, հստակ, ամբողջական և ծախսարդյունավետ:

Յուրաքանչյուր շահառուից նաև պահանջվում է ներդրում կատարել ծրագրում՝ իր սեփական միջոցների կամ երրորդ կողմերի ներդրման միջոցով: Համաֆինանսավորումը կարող է իրականացվել ֆինանսական կամ մարդկային ռեսուրսների, բնաիրային ներդրումների կամ գործողության կամ ծրագրի արդյունքում ստացված եկամտի տեսքով:

Եվրոպայի խորհուրդն ակնկալում է, որ համայնքի ներդրումը կկազմի դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը **10%-ը**:

6. **Հետևելով ընդհանուր նպատակին, նախապատվությունը կտրվի հետևյալին՝**

- Համայնքների կարիքներին համապատասխան ծրագրեր/գործողություններ,
- Ծրագրեր/գործողություններ՝ ուղղված միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցությանը,
- Ծրագրեր/գործողություններ՝ ուղղված երիտասարդներին, կանանց և անապահով / աղքատության մեջ ապրող մարդկանց:

7. **Գործողության հետևյալ տեսակները չեն դիտարկվի.**

- Երրորդ կողմերին ֆինանսական աջակցություն ցուցաբերող ծրագրեր/գործողություններ (դրամաշնորհի վերաբաշխման սխեմաներ),
- Ծրագրեր/գործողություններ, որոնք վերաբերում են միայն կամ հիմնականում անհատական ուսուցողական կամ վերապատրաստման կրթաթոշակներին,
- Կուսակցություններին աջակցող ծրագրեր/գործողություններ:

8. **Ֆինանսավորման պայմանները**

Ընդհանուր առմամբ, դրամաշնորհի միջոցները պետք է բաշխվեն հետևյալ կերպ.

- Դրամաշնորհի գումարի 75%-ը կվճարվի Դրամաշնորհառուին՝ դրամաշնորհային պայմանագրի ստորագրումից հետո,
- Մնացորդը կվճարվի Դրամաշնորհառուին՝ հիմնվելով իրական ծախսերի վրա, դրամաշնորհի իրականացման վերջնական բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացումից և Եվրոպայի խորհրդի կողմից վերջիններիս ընդունումից հետո:

9. **Հաշվետվությունների ներկայացման պահանջները.**

- **բովանդակային հաշվետվություններ -** դրամաշնորհի օգտագործման վերաբերյալ ամբողջական բովանդակային հաշվետվություն և գործողությունների/միջոցառումների ժամանակ ներկա յուրաքանչյուր մասնակցի գրանցամատյանի պատճեն, ներառյալ մասնակիցների անուններն ու ստորագրությունները:

- **ֆինանսական հաշվետվություններ** - ներկայացվում է Դրամաշնորհառուի ֆինանսական պատասխանատուի կողմից վավերացված՝ այն արժույթով, որով կկնքվի դրամաշնորհային պայմանագիրը (ՀՀ դրամով), հայտարարագիր (անգլերեն լեզվով), որում նշվում են գործողությունների իրականացման համար կատարված ծախսերը: Հայտարարագրին կցվում են «համապատասխան բնօրինակ փաստաթղթերը» (տե՛ս ստորև): Եվրոպայի Խորհրդն իրավունք է վերապահում պահանջել հաշիվների անգլերեն լեզվով ամփոփ թարգմանությունները: Եթե օրինական պատճառներով Դրամաշնորհառուները պետք է իրենց մոտ պահեն բնօրինակ փաստաթղթերը, ապա ֆինանսական հաշվետվությանը կցվում են հաստատված պատճենները:

«Համապատասխան բնօրինակ փաստաթղթեր» են հանդիսանում ստորագրված պայմանագրերը, աշխատանքի (բոլոր գործարքների) ընդունման ակտերը և հաշիվ ապրանքագրերը, վճարման հանձնարարականները, ինչպես նաև բանկային քաղվածքները:

Կլոր սեղանների / համաժողովների դեպքում, «համապատասխան բնօրինակ օժանդակ փաստաթղթեր» են հանդիսանում միջոցառման ծրագիրը, որում նշվում են միջոցառման անվանումը, ամսաթիվը, անցկացման վայրը և օրակարգը. միջոցառումը անցկացնող անձանց անունները, մասնակիցների ստորագրված ցուցակը, միջոցառման անցկացման վայրի սեփականատիրոջ հետ պայմանագրերը (օրինակ՝ հյուրանոց)՝ տարածքի վարձակալության, մասնակիցների սննդի ապահովման վերաբերյալ, վերոնշյալ ծառայությունների համար սեփականատիրոջ կողմից հաշիվ-ապրանքագրերը և միջոցառման արդյունքների մասին հաշվետվություն (տե՛ս վերը նշված բովանդակային հաշվետվություն բաժինը):

Խորհրդատվական ծառայությունների համար «համապատասխան բնօրինակ փաստաթղթեր» են հանդիսանում արդյունքների ստացման ապացույցների ներկայացում, փորձագետների և խորհրդատուների հետ պայմանագրեր, որոնք պարունակում են իրականացվող ծառայությունների հատուկ նկարագրություն, աշխատանքների կատարումից և առաքումից հետո ներկայացված հաշիվ ապրանքագրերը (խորհրդատուների մասնգիտացումը պետք է համապատասխանի պայմանագրով հաստատված գործունեության բնույթին):

Ճանապարհածախսերի/ փորձագետների և մասնակիցների կեցության ծախսերի համար «համապատասխան բնօրինակ օժանդակ փաստաթղթեր» են հանդիսանում ճանապարհորդական և կեցության ծախսերի վերաբերյալ տուրիստական գործակալության հետ պայմանագրերը, անհրաժեշտության դեպքում՝ տուրիստական գործակալության հաշիվ-ապրանքագրերը (նշվում են ճանապարհորդության վայրը, ամսաթվերը, տոմսի արժեքը և ճանապարհորդող անձանց անունները), միջոցառման ծրագիրը, նշելով փորձագետների անունները, և մասնակիցների ստորագրված ցուցակները:

Վերոնշյալ նկարագրությունը ամբողջական չէ: «Համապատասխան բնօրինակ փաստաթղթեր» հասկացության մեկնաբանման հետ կապված ցանկացած անհստակություն Դրամաշնորհառուի կողմից խորհրդակցվում է Եվրոպայի խորհրդի հետ:

V. ԻՆՉՊԵՆ ԴԻՄԵԼ

1. Ներկայացվող փաստաթղթերը.

Յուրաքանչյուր Դիմում-հայտ պետք է պարունակի.

- լրացված և ստորագրված **Դիմում-հայտ** (տե՛ս **Հավելված I**),
- **Բյուջեն** (օգտագործելով **Հավելված II-ում** վերարտադրված ձևանմուշը),
- **Աշխատանքային պլանը** (օգտագործելով **Հավելված III-ում** վերարտադրված ձևանմուշը):

Թերի Դիմում-հայտերը չեն դիտարկվի:

2. Հարցեր

Ընդհանուր տեղեկատվություն կարելի է ստանալ Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի և Եվրոպայի խորհրդի Լավ կառավարման փորձագիտական կենտրոնի կայքէջերում՝ Council of Europe Office in Yerevan - Council of Europe Office in Yerevan (coe.int) և Centre of Expertise for Good Governance - Good Governance (coe.int).

Տվյալ դրամաշնորհային մրցույթի վերաբերյալ այլ հարցեր պետք է ուղարկվեն դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, և ուղարկվեն բացառապես հետևյալ հասցեին՝ tender.armenia-bh8900@coe.int՝ վերնագրում նշելով՝ **Հարցեր. Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:**

3. Ներկայացման վերջնաժամկետ

Հայտատուների կողմից լրացված և ստորագրված դիմում-հայտը և հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով (Word և / կամ PDF) հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեին՝ tender.armenia-bh8900@coe.int: Էլ. նամակի վերնագիրը պետք է լինի՝ **Դրամաշնորհի դիմում-հայտ. Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:**

Դիմում-հայտերը պետք է ուղարկվեն **մինչև 2024թ.-ի հունվարի 5-ը (Հայաստանի ժամանակով՝ մինչև ժ. 24:00-ը):** Վերջնաժամկետից հետո ստացված դիմում-հայտերը չեն դիտարկվի:

4. Դիմում-հայտի փոփոխություն

Սկզբնական դիմում-հայտի կամ ձևաչափի ցանկացած փոփոխություն կհանգեցնի համապատասխան դիմում-հայտի անհապաղ մերժմանը:

VI. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ներկայացված ծրագրերի առաջարկները կգնահատվեն Գնահատող հանձնաժողովի կողմից՝ կազմված Եվրոպայի խորհրդի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՏԻՄ ներկայացնող միավորումներներից մեկի ներկայացուցիչներից:

Ընթացակարգը պետք է հիմնված լինի Եվրոպայի խորհրդի դրամաշնորհների տրամադրման հիմնարար սկզբունքների վրա, որոնք են՝ թափանցիկությունը, ոչ հետադարձ ուժը, ոչ կուտակային շնորհումները, շահույթ չհետապնդելը, համաֆինանսավորումը և խտրականության բացառումը՝ համաձայն Եվրոպայի խորհրդի դրամաշնորհների տրամադրման 2015թ. դեկտեմբերի 16-ի 1374 Կանոնակարգի:

Հայտատուները և ներկայացված ծրագրերը պետք է համապատասխանեն հետևյալ բոլոր չափանիշներին.

1. **Բացառման չափանիշներ.**

Հայտատուները չեն դիտարկվի դրամաշնորհի տրամադրման ընթացակարգի համար, եթե նրանք կամ, իրավաբանական անձանց դեպքում, նրանց սեփականատեր(եր)ը կամ գործադիր պաշտոնյան(երը).

ա. վերջնական դատավճռով դատապարտվել են հետևյալ մեղադրանքներից մեկով կամ մի քանիսով՝ հանցավոր կազմակերպությանն անդամակցություն, կոռուպցիա, խարդախություն, փողերի լվացում, ահաբեկչության ֆինանսավորում, ահաբեկչական հանցագործություններ կամ ահաբեկչական գործունեություն, երեխաների աշխատանքի կամ մարդկանց առևտրի հետ կապված հանցագործություններ.

բ. գտնվում են սնանկության, լուծարման, գործունեության դադարեցման, անվճարունակության կամ պարտատերերի հետ պայմանավորվածության կամ նմանատիպ կարգի այլ իրավիճակում.

գ. res judicata վճռով հայտնաբերվել է իրավախախտում, որը ազդում է նրանց մասնագիտական բարեվարքության վրա կամ լուրջ մասնագիտական սխալ է հանդիսանում.

դ. չեն կատարում երկրի կանոնադրական դրույթներով հաստատված սոցիալական ապահովագրության վճարների, հարկերի և տուրքերի վճարման մասով իրենց պարտավորությունները.

ե. հանդիսանում են հարկային, սոցիալական կամ այլ իրավական պարտավորությունները շրջանցելու համար ստեղծված սուբյեկտ (դատարկ կեղևային ընկերություն), երբևէ ստեղծել են կամ գտնվում են այդպիսի կառույցի ստեղծման փուլում.

զ. ներգրավված են եղել Եվրոպայի խորհրդի կամ պետական ֆինանսական միջոցների վատ կառավարման մեջ:

Դիմում-հայտը ստորագրելով, հայտատուն պետք է հայտարարի, որ ներգրավված չէ վերը նշված իրավիճակներից որևէ մեկում (Տես **Հավելված I, կետ 11**):

Եվրոպայի խորհուրդը իրավունք է վերապահում հաջորդ փուլում հայտատուից պահանջել հետևյալ հիմնավորող փաստաթղթերը.

- ա), բ), գ) և զ) կետերի համար - քաղվածք դատավճիռների արձանագրությունից կամ դրան համարժեք փաստաթուղթ, որը վկայում է դատավճռի բացակայության մասին, տրված Հայտատուի երկրի իրավասու դատական կամ վարչական մարմնի կողմից.
- դ) կետի համար - իրավասու մարմնի կողմից տրված վկայագիր:

2. **Իրավասության չափանիշներ.**

Դրամաշնորհին դիմելու իրավասու լինելու համար, հայտատուն պետք է՝

- լինի ՀՀ խոշորացված համայնքի ՏԻՄ.
- ունենա բավարար գործառնական և մասնագիտական կարողություններ, ներառյալ մարդկային ռեսուրսներ (աշխատակազմ)՝ իր ծրագրի առաջարկում նկարագրված գործողությունները իրականացնելու համար.
- նշի պաշտոնական բանկային հաշիվ՝ ՀՀ դրամով, որտեղ դրամաշնորհառուն կարող է ապահով կերպով մուտքագրել դրամաշնորհի համար նախատեսված միջոցները:

Միևնույն դրամաշնորհի տեսակի համար մի քանի դիմում-հայտեր չեն թույլատրվում և կհանգեցնեն ներկայացված բոլոր դիմում-հայտերի մերժմանը:

3. **Դիմում-հայտերի գնահատման չափանիշներ.**

Դիմում-հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

- որքանո՞վ է առաջարկվող ծրագիրը համապատասխանում *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* նպատակին (40%).
- որքանո՞վ է առաջարկվող ծրագիրը համապատասխանում *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* պահանջներին (30%).
- դիմում-հայտի և բյուջեի առաջարկի ճշգրտությունը, հստակությունը և ծախսարդյունավետությունը (20%).
- դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձը (10%):

VII. ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ

Ընտրության գործընթացի ավարտին բոլոր հայտատուները գրավոր կտեղեկացվեն իրենց համապատասխան դիմում-հայտերի վերաբերյալ վերջնական որոշման, ինչպես նաև ձեռնարկվելիք հետագա քայլերի մասին:

Ընտրված Դրամաշնորհառուների հետ կկնքվի Դրամաշնորհի պայմանագիր (տեղեկատվության համար տես Հավելված IV): **Հայտատուներին խորհուրդ է տրվում ծանոթանալ պայմանագրի ձևանմուշին, մասնավորապես վճարման և հաշվետվությունների ներկայացման պահանջների մասով:**

VIII. ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Փուլ	Ժամանակացույց
Դիմում-հայտերի ներկայացման հրավերի հրապարակում	06-ը դեկտեմբերի, 2023թ.
Դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ	05-ը հունվարի, 2024թ.
Հայտատուների իրազեկում արդյունքների վերաբերյալ	22-ը հունվարի, 2024թ.
Դրամաշնորհների պայմանագրերի կնքում	01-ը փետրվարի, 2024թ.
Իրականացման ժամանակահատված	2024թ. -ի փետրվար-հուլիս

* * *